



ՀԱՅԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

(Պատմական գիտությունների
քննաձու)

ԱՍՏՎԱԾԱԾՆՆԻ ԱՍՈՐԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ



Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը իր կատարելությամբ հայ և օտար բանասերներից բարձր գնահատանքի է արժանացել և անվանվել նույնիսկ «թագուհի թարգմանությանց»։ Մեր թարգմանիչների նման հաջողությունը պետք է բացատրել թարգմանչական արվեստի այն մեծ վարպետությամբ, որ անկասկած նրանք ձեռք էին բերել մինչև հայերեն գրերի գյուտը կատարած քարոզչական աշխատանքների ժամանակ, երբ ստիպված ասորերենից և կամ հունարենից, հայերեն բանավոր էին թարգմանում Աստվածաշնչից հավուր պատշաճի հատվածներ, ժողովրդին հասկանալի դարձնելու նպատակով։

Մեր պատմիչները իրենց աշխատություններում տեղեկություններ տալիս են Աստվածաշնչի հայերեն թարգմանության մասին, սակայն դժբախտաբար այդ վկայությունները հստակ չեն և այդ պատճառով էլ բանասերների ու պատմաբանների մոտ առաջացրել են զանազան ենթադրություններ։

Նախ հետևենք Կորյունի հաղորդած տեղեկություններին. նա իր «Վարք Մաշտոցի»-ում գրում է, որ հայերեն տառերի ստեղծումից հետո «ուշ եղեալ երկոցունց երանելեացն (Սահակն ու Մեսրոպը)՝ զիրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել։ Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և

ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն»¹։

Ինչպես տեսնում ենք՝ թեև Կորյունը գրում է Սահակ կաթողիկոսի թարգմանական աշխատանքների մասին, բայց անորոշ է թողնում այն, թե ի՞նչ էր թարգմանում նա։ Համենայն դեպս Աստվածաշնչի հայերեն թարգմանության մասին ավելի որոշակի վկայություն կա փոքր Կորյունի մոտ. այս բնագրից իմանում ենք, որ հայերեն գրերի գյուտից հետո Յզնիկն ու Հովսեփը ուղարկվում են Նդեսիա, որպեսզի «Յասորի բարբառոյն զՍուրբ Գիրս՝ նոր թարգմանեսցեն ի հայ լեզու»²։

«Սուրբ գիրք» ասելով բնականաբար Կորյունը նկատի ունի Հին և Նոր Կտակարանը. ուրեմն այս վկայությունից պետք է եզրակացնել, որ Աստվածաշնչը առաջին անգամ հայերենի է թարգմանվել ասորերենից։ Կորյունի մի այլ վկայության մեջ հիշատակվում է այս թարգմանությունը, առանց անունը տալու. հայտնի է, որ Սահակի և Մեսրոպի աշակերտները ասորականից հետո գնում են հունական մշակույթի կենտրոններ՝ ժամանակի գիտության հետ ծանոթանալու նպատակով. նրանցից ոմանք լինում են նաև Կոստանդնուպոլսում և այնտեղից հայրենիք վե-

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 74։

² «Պատմութիւն վարուց», Վենետիկ, 1894, էջ 32։

րադառնալիս իրենց հետ բերում են ոչ միայն նիկիայի առաջին և Եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովների կանոնները, այլև Աստվածաշնչի ճշգրիտ օրինակը: Այսպես է գրում Կորյունը. «Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բաղում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, և նիկիական և Եփեսոսական կանոնօք, գային երևելով աշխարհին հայոց, և առաջի դնէին հարցն դբերեալ կտակարանսն եկեղեցւոյս քրոյ»³: Այսպիսով, «Աստվածատուր գրքերի», այսինքն Աստվածաշնչի ստույգ օրինակը, որը անկասկած հունարեն «Եօթանասնից» օրինակն էր, աշակերտները բերում են Հայաստան և նրա հիման վրա է, որ Սահակ Պարթևը «դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ գլառաջագոյն գլանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք: Եւ շատ ևս մեկնութիւն դրոց թարգմանէին»⁴:

Այսպիսով պարզվում է, որ մինչև Եփեսոսի տիեզերական 3-րդ ժողովը եղել է Աստվածաշնչի «յանկարծագիւտ» և «փութանակի» թարգմանություն և այն՝ ժողովից հետո բերված հունական օրինակների հիման վրա վերանայվել է: Ուշագրավ է նաև, ինչպես հետագայում կանգ կառնենք այդ հարցի վրա, ասորիներն էլ Եփեսոսի ժողովից հետո եկեղեցիներում և դպրոցներում գործածությունից դուրս են հանում մինչ այդ օգտագործվող հին և նոր կտակարանի ոչ հունական տարբերակները և թարգմանում են հատկապես նոր Կտակարանը:

Մովսես խորենացու հայոց պատմության մեջ Աստվածաշնչի հայերեն թարգմանության վերաբերյալ տեղեկությունները ավելի հստակ են և որոշակի: Նա պատմում է, որ հայոց Արշակ թագավորի մահից հետո Պարսկաստանի թագավոր Շապուհը, պարսկական զորքի օգնությամբ Մեհրուժանին ուղարկում է Հայաստան. սա գալիս է ու սկսում ասպատակությունները մեր երկրում. միևնույն ժամանակ նա «զամենայն կարգ քրիստոնէութեան շանայր խափանել: Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր և հրաման տայր մի՝ ուսանել զգրութիւն յունարէն, այլ զպարսիկ, և մի՝ որ իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել»⁵:

³ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 76:

⁴ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 76:

⁵ Մովսէս Խորենացւոյ պատմութիւն հայոց, աշխտ. Մ. Արեղյան, Ս. Հարությունյան, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. 12, էջ 301:

Դ, գարի վերջին տասնամյակներից, հատկապես Հայաստանի բաժանումից հետո, պարսկական մասում ապրող հայերը ղրկվում են ոչ միայն հունական մշակույթի կենտրոնների հետ կապեր հաստատելու հնարավորությունից, այլև հունարեն կարգալուց կամ սովորելուց:

Բնական էր, որ նման արգելքներից հետո հայերը իրենց կապերը ամրացնեին զխավորապես ասորական քրիստոնեական մշակույթի կենտրոնների հետ և պատահական չէր այն, որ Մաշտոցը իր աշակերտների հետ հայերեն գրեր ստեղծելու համար գնաց Եդեսիա ու Ամիդ:

Խորենացին չի բավարարվում իր այս հաղորդումներով և, իր ասածը հաստատելու ու որոշակի դարձնելու նպատակով, մեզ տալիս է ավելի շատ բնորոշ մանրամասնություններ: Նա շարունակում է պատմել, թե ինչպես Մեսրոպը, Աղվանքում իր լուսավորական աշխատանքները ավարտելուց հետո, վերադառնում է Հայաստան և «գտան է զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորւոյն, յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս հայոց՝ շտային պարսիկ վերակացուքն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի»⁶:

Աստվածաշնչի ասորերենից հայերեն առաջին այս թարգմանության մասնակցում են Սահակից և Մեսրոպից բացի Եզնիկը «Յոհան եկեղեցացին և Յովսեփ Պաղնացին» և միասին թարգմանում են «խորհրդարար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր կտակս յեղու ի հայ բան»⁷: Ահա այս թարգմանությունն էր, որ հետագայում Եփեսոսի ժողովից հետո, Աստվածաշնչի հունական «Եօթանասնից» կոչված օրինակի հետևողությամբ, այս անգամ Սահակն ու Մեսրոպը Եզնիկի մասնակցությամբ, ինչպես վկայում է Մովսես խորենացին. «Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալ փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ»⁸:

Մեր պատմիչներից Ղազար Փարպեցու հայոց պատմությունն էլ տեղեկություններ է պարունակում Աստվածաշնչի հայերեն թարգմանության մասին. բայց նա գիտակցորեն լուրջյան է մատնել Աստվածաշնչի ասորերենից առաջին անգամ թարգմանելու

⁶ «Մովսիսի խորենացւոյ պատմութիւն հայոց», էջ 329:

⁷ Նույն տեղում, էջ 327:

⁸ Նույն տեղում, էջ 343:



փաստը, և այն հասկանալի է, որովհետև ինչպես մեզ հասած իր նամակից, այնպես էլ իր հայոց պատմությունից երևում է, որ նա ատենություններ է խոսում թե՛ ասորիների և թե՛ նրանց մշակույթի մասին. նա իսկապես Եփեսոսի ժողովից հետո Աստվածաշնչի վերանայումը ներկայացնում է որպես առաջին թարգմանություն. նա պատմում է, որ Մաշտոցը իր քարոզչական աշխատանքների ժամանակ մտածմունքի մեջ է ընկնում. «Քանզի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այլն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բաղում թողակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան, Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի Վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ»⁹:

Ու այդ է պատճառը, որ երբ հայերեն գրերը ստեղծվում են, ինչպես Փարպեցին է պատմում, «Ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խառնէն՝ յասորի տանջանացն գերծեալք ի լոյս խնդային: Բայց տարակուսեալք կասէին յանշտութենէ դրոց սրբոց. քանզի ոչ գոյին դեռ ևս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ»¹⁰, Եվ միակ մարդը, որը իր հունարենի իմացությամբ կարող էր Աստվածաշունչը հունարենից հայերեն թարգմանել, այն՝ Սահակ կաթողիկոսն էր, — շարունակում է Փարպեցին, և դրա համար էլ Մաշտոցը թագավորի, նախարարների, մեծամեծ տանուտերների, ավագ քահանաների ընկերակցությամբ գնում է կաթողիկոսի մոտ, որպեսզի վերջինս սկսի Աստվածաշնչի հունարեն օրինակից հայերեն թարգմանության «սաստիկ և կարևոր գործը». «Արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր և թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս»¹¹:

Թեև Աստվածաշնչի հայերեն մեզ հասած օրինակում բանասերները մատնանշել են ասորաբանությունների հետքեր, սակայն, պարզ է, որ այն «Եփեսոսյանից» հետևողությամբ Եփեսոսի ժողովից հետո վերանայ-

ված տարբերակն է, և Փարպեցին միայն հիշատակում է այս տարբերակը և լուծթյան մատնում առաջինը, որը արդեն իր ժամանակ եկեղեցիներում և դպրոցներում չէր գործածվում:

Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունից պահպանվել են միայն Մնացորդաց Ա և Բ գրքերը էջմիածնի № 183 մի ձեռագրում, որը գրվել է 1635 թվին. այս ձեռագրի վրա առաջին անգամ ուշագրություն է դարձրել էջմիածնի միաբաններից Հ. Նղիս Հասան-Ջալալյանցը, որը այդ մասին հայտնում է այդ օրերին էջմիածնում գտնվող Գր. հալաթյանցին: Հետագայում Սահակ եպիսկոպոս հաբալյանցը¹² իմանալով հրատարակվելիք ձեռագրի մասին իր հերթին տեղեկացնում և ուղարկում է Գր. հալաթյանցին Նրուսաղեմի ս. Հակոբյանց վանքում պահպանված 1269 թվի մի գրագրից նույն «Մնացորդաց» Ա և Բ գրքերի մի այլ օրինակը: Գր. հալաթյանցը երկու այս ձեռագրերը համեմատում է և իր գրքի առաջաբանում գրում. «Թեև միևնույն խմբագրություն են ներկայացնում, բայց ունին և բավական մանր տարբերություններ, որովհետև տարբեր օրինակներից են եղել ընդօրինակված: էջմիածնի օրինակի զխավոր տարբերությունը Նրուսաղեմի օրինակից այն է, որ նա, ինչպես ասացի, ենթարկված լինելով յոթասանից թարգմանության արտաքին ազդեցության, ունի նախադրություն կամ Առաջաբան, Յանկ զխոց Ա և Բ գրոց և զխահամար, որոնք բոլորովին պակասում են Նրուսաղեմի օրինակում»¹³:

Գր. հալաթյանցը «Մնացորդաց» գրքերի այս օրինակը հրատարակելիս, ինչպես ինքն է վկայում, այն համեմատել է եբրայական բնագրի հետ և եկել այն եբրայացության, որ «մեր նորագյուտ թարգմանությունը ամենայն հավանականությամբ հայերեն լեզվի ամենահին՝ թե շասենք՝ անդրանիկ գրվածքներից մեկն է ընդունելու, որ հասել է մեր ձեռքը»¹⁴ և վերջում ավելացնում է. «գալով այն խնդրին, թե նորագյուտ մնացորդաց գրքերը արդարև ասորերենից են թարգմանված, այս մասին ես թույլ կտամ ինձ այսպես ձևակերպել իմ կարծիքս՝ թողնելով խնդրի մանրակրկիտ հետազոտությունը և վերջնա-

⁹ Ղազար Փարպեցու պատմություն հայոց, աշխտ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփղիս, 1904, դ. ԺԱ, էջ 13:

¹⁰ Նույն տեղում, էջ 16:

¹¹ Ղազարայ Փարպեցու պատմություն հայոց, էջ 16:

¹² Գր. հալաթյանցը իր գրքի 2-րդ էջի ծանոթագրության մեջ հայտնում է, որ դեռ մեր թվականության 1773 թվին ս. Հակոբյանց միաբանության անդամներից Սարգիս արքեպիսկոպոսը նկատել էր այս թարգմանության տարբերությունը:

¹³ Գր. հալաթյանց, «Գիրք մնացորդաց ըստ հնագույն հայ թարգմանութեան», Մոսկվա, 1899, էջ Ե:

¹⁴ Նույն տեղում, էջ Բ:

կան եզրակացություններ մասնագետ աստ-րագետներին. Մնացորդաց գրքերի ասորե-րեն գոնե այն, որի հետ ես համեմատել եմ մեր նորագյուտ թարգմանությունը, սակա-նմանություն ունի մերի հետ և, ընդ հակա-ռակն՝ ավելի մերձենում է հունականին կամ յոթանասնիցն. շատ ավելի մոտ է մեր նո-րագյուտին երրայականը: Այսու առնանքիվ ես ենթադրում եմ, որ Մնացորդաց գրքերի առաջին հայերեն թարգմանությունը կա-տարված է եղել ասորերենից՝ այն հնագույն ասորերեն թարգմանությունից, որ ծանոթ է թարգում կոչումով, որ՝ ըստ կարգին, շատ մոտ էր երրայական բնագրին¹⁵:

Անկասկած Գր. Խալաթյանցի ձեռքին եղել է Աստվածաշնչի ասորերեն այնպիսի մի օրի-նակ, որը թարգմանվել էր հունարեն «Ծոթա-նասնից» տարբերակից և այդ պատճառով էլ նա դժվարացել է ճշգրիտ խոսք ասել. այժմ մինչև Մնացորդաց գրքերի հայերեն առաջին այս թարգմանության որոշ հատ-վածների համեմատությունը ասորերեն բնա-գրի հետ՝ նախ ծանոթանանք, թե Աստվա-ծաշնչի ինչպիսի՝ ասորերեն վաղ թարգմա-նություններ են եղել:

Աստվածաշնչի ասորերեն առաջին թարգ-մանություն, հատկապես Հին Կտակարանի մասին, ասորական գրականության մեջ կան բազմաթիվ ավանդություններ: Ավանդու-թյուններից մեկի համաձայն, Հին Կտակա-րանի «Պեշիտտո» կամ «պարզ» ܡܝܬܬܐ ܢܘܠܬܐ կամ է «պարզ» օրինակը թարգման-վել է մեր թվականության առաջին դա-րում: Է գարի ասորական գրականության անվանի մատենագրերից՝ Հակոբ Եղեզայանի անդեկացնում է, որ «Պեշիտտոն» թարգման-վել է երրայերենից Աբգարի օրով. սա մար-դիկ է ուղարկում, որոնք գնում են Երու-սաղեմ և Հին Կտակարանը երրայերենից ասորերենի են թարգմանում և իրենց հետ բերում¹⁶: Թ դարի հեղինակներից Հաղիտա քաղաքի եպիսկոպոս՝ Յեշուդադ Մերվացին իր «Աստվածաշնչի մեկնություն» աշխատու-թյան մեջ գրում է, որ «Հին Կտակարանի «Պեշիտտոն» թարգմանել է Ազա անունով մի քահանա, որը այդ նպատակով էլ ղնացել է Սամարիա»¹⁷:

Հին Կտակարանի ասորերեն առաջին թարգմանության հարցով զբաղվել են բաղ-մաթիվ գիտնականներ, և դրանցից մեծ մասը եկել է այն եզրակացության, որ այն չի

թարգմանվել ինչ-որ ժամանակում և ինչ-որ հեղինակի կողմից, այլ կատարվել է դարերի ընթացքում և տարբեր հեղինակների կող-մից: Եվսերիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունից» հայտնի է, որ մեր թվա-կանության Բ դարի կեսերին արդեն Եղե-սիայում գոյություն ունեին քրիստոնեական համայնքներ¹⁸, և այդ ժամանակ համայնք-ները մեծ մասամբ կազմված էին հրեանե-րից, որոնք մինչև այդ էլ ունեցել են հրեա-կան աղոթավայրեր և կամ հավաքատեղի-ներ: «Ադգայի վարդապետություն»-ից իմա-նում ենք, որ Ադգան քարոզելու նպատակով Եգիպտոս դալով, իջևանում է իր հայրենակից Տորիի տանը¹⁹: Անկասկած այս միջավայ-րում էլ սկսեցին Հին Կտակարանը թարգմա-նել երրայերենից ասորերենի²⁰: Այս թարգ-մանության մեջ զանազան քրիստոնեական հասկացողությունների առկայությունը բա-նասերներին համոզել է, որ Հին Կտակարանի այս թարգմանիչները եղել են քրիստոնյաներ: Հետաքրքրական է նաև այն, որ Հին Կտա-կարանի այնպիսի գրքեր, որոնք ասորիների համար սկզբում կանոնական գրքեր չեն եղել, «Ծոթանասնիցի» ոչ մի ազդեցություն չեն ունեցել իրենց վրա, իսկ կանոնականե-րի վրա այն զգացվում է. այսպես օրինակ՝ «Եզրը, նէեմիին, Եսթերը, Յովբը, Թագաւո-րութեանց գրքերը» շատ հարազատ են Թար-գումին, այսինքն երրայական բնագրին, իսկ Հնգամատեանը, Մարգարենները, Սաղմոսնե-րը գերծ չեն հունականի ազդեցությունից²¹:

Հայտնի է, որ «Ծոթանասնիցը» քրիստոն-յաններն էին օգտագործում, իսկ «Թարգումը»՝ հրեաները, և հունականի ազդեցությունը կա-րող էր հանդես գալ Մերձավոր Արևելքի քրիստոնեական համայնքների ներսում, երբ հրեաների փոխաբեն այլ ազգի ներկայացու-ցիչներ մեծամասնություն էին կազմում. հա-վատացյալների շրջապատում նման փոփո-խություններ են տեղի ունենում Բ դարի կե-սերից: Այսպիսով, եթե գիտնականների են-թադրությունը ճիշտ է, որ Հին Կտակարանը սկսել են թարգմանել Բ դարի կեսերից, ապա այն պետք է ավարտված լիներ արդեն Դ դա-

¹⁸ Եվսերիոսի Կեսարացու պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, դպր. Բ, դլ. Ա, էջ 75:

¹⁹ G. Phillips, The Doctrine of Addai, the Ap-ostle, p. 5.

²⁰ M. Perles, Meletemata Peschittoiana, Bres-lau, 1859: Cornill, Das Buch des Propheten Ezechi-el, Leipzig, 1896, p. 15: W. E. Barnes, Apparatus to chronicles in the Peschitto, Cambridge, 1897.


²¹ F. Berg, The influence of the Septuagint upon the Peschitta, Psalter, New-York, 1895: Mandl, Die Pes Chitto zu Hiob, Leipzig, 1892.

¹⁵ Նույն տեղում, էջ Ժ:

¹⁶ G. Phillips, Scholia on some passages of the Old Testament, by Mar Jacob, Londres, 1864.

¹⁷ Barhebraeus, Le magasin des mystères, Beyrouth, 1890, p. 100.





րի կեսերին, որովհետև Դ դարի ասորական գրականության երկու խոշոր դեմքերի՝ Ափրահատի և Եփրեմ Ասորու մեզ հասած գործերում վկայակոչված են Հին Կտակարանի «Պեղիտություն» հատվածներ²²։ Այս երևույթն էլ բավական է եզրակացնելու համար, որ Դ դարում արդեն ասորական եկեղեցիներում, դպրոցներում, հատկապես Մծբինում, Եգեսիայում և նրանց շրջակայքում ու դրանց հարևան մասերում գործածում էին Հին Կտակարանի «Պեղիտություն»։

Իսկ ինչ վերաբերում է նոր Կտակարանի ասորերեն թարգմանության, այն այլ պատկեր է ներկայացնում։

Նոր Կտակարանի ասորերեն մի քանի թարգմանություններ են եղել, որոնք Զ դարից սկսյալ վերանայվել են կամ վերստին թարգմանվել։ Մենք կանգ ենք առնելու այդ թարգմանություններից միայն երեքի վրա, որոնք գոյություն են ունեցել մինչ 5-րդ դարի առաջին կեսը, այսինքն այն օրինակների վրա, որոնցից կարող էին օգտվել մեր թարգմանիչները։

Առաջին ասորերեն ավետարանը եղել է «Դիատեսարոն» կամ «խառն» (Evangelion Dmakhla) կոչված ավետարանը²³։ Սա ասորերեն ամենահին ավետարանն է, այն պատրաստել է եկեղեցական հայտնի գործիչներից՝ Հուստինիանոսի աշակերտ Տատիանոսը, մեր թվականության 170 թվին մոտավորապես։ Հեղինակը չորս ավետարանների բովանդակությունը միացնելով մեկ ավետարան է պատրաստել և այդ պատճառով էլ այն կոչվել է «Դիատեսարոն» կամ «խառն» ավետարան։ Թե ինչ լեզվով գրված է եղել առաջին անգամ «Դիատեսարոնը»՝ հայտնի չէ։ Ուսումնասիրողներից ոմանք²⁴ ենթադրում են, որ այն եղել է հունարեն և ապա նրա կենդանության ժամանակ մի ուրիշը թարգմանել է ասորերեն, իսկ ոմանք էլ²⁵ ապացուցում են, որ Տատիանոսը այս ավետարանը ասորերեն է գրել։ Համենայն դեպս «Դիատեսարոնը» ամենից շատ օգտագործված և ամենից շատ տարածված ավետարանն է եղել Եգեսիայում, Մծբինում և

նրանց շրջակայքում՝ մինչև 5-րդ դարի առաջին երեք տասնամյակները. օրինակ «Ադդայի վարդապետության» վկայության համաձայն Եգեսիայում հիմնված առաջին եկեղեցում կարդում էին «Դիատեսարոնը»²⁶։ Մի այլ փաստ նաև այն է, որ Ափրահատի և Եփրեմ Ասորու մեզ հասած աշխատություններում Հին Կտակարանից վկայակոչումները ինչպես ասացինք «Պեղիտություն» են, իսկ նոր Կտակարանի վկայակոչումները՝ «Դիատեսարոնից»²⁷։

Ասորական աղբյուրների վկայությամբ «Դիատեսարոնը» եկեղեցիներում և դպրոցներում գործածվել է մինչև Եփեսոսի ժողովը. այդ ժողովից հետո Եգեսիայի Բաբուլա եպիսկոպոսը ինքը թարգմանում է նոր Կտակարանը և արգելում է «Դիատեսարոնի» օգտագործումը և հրամայում է այն ոչնչացնել։ Մեզ հայտնի է, որ Կյուր քաղաքի եպիսկոպոս Թեոդորեն միայն ոչնչացրել է «Դիատեսարոնի» երկու հարյուր օրինակ²⁸։ Հստ երկվույթին այս հրամանի հետևանքով ոչնչացվում են բոլոր օրինակները և դժբախտաբար այն չի հասել մեզ։ Պահպանվել են շատ փոքր հատվածներ և մի արաբերեն օրինակ, որը վերագրվում է 13-րդ դարի ասորի հեղինակներից Աբու Ֆարաշին, բայց այն, ինչպես մատնանշել են մասնագետները, այնպիսի խմբագրության է ենթարկված, որ բոլորովին աղավաղված է²⁹։

Մեզ է հասել «Դիատեսարոնի» Եփրեմ Ասորու գրած մեկնությունը, այն էլ միայն հայերեն հին թարգմանությամբ։ Մյուսինքն երեք Եփրեմ Ասորու այս մեկնությունը հայերենից թարգմանել է լատիներեն, իսկ գերմանացի գիտնական Կանը, լատիներեն այս թարգմանության և Ափրահատի ու Եփրեմ Ասորու աշխատություններում պահպանված վկայակոչումների միջոցով, փորձեց վերականգնել բնագիրը³⁰։

Ավետարանների երկրորդ ասորերեն տարբերակը հայտնի է «Առանձին ավետարաններ անունով»³¹։ Այս «Առանձին» ավետարանները (Evangelion da Mepharreshe) պահպանվել են ասորական երկու ձեռագրերում, որոնցից առաջինը գտնվում է անգլիացի

²² R. Duval, La littérature Syriacque, Paris, 1907, p. 31.

²³ Ասորերեն Demakhla բառը նշանակում է «խառն»։ Մեզ հասած Եփրեմ Ասորու «Դիատեսարոնի» մեկնության մեջ, այս ավետարանը անվանված է «Համարարառն»։

²⁴ R. Duval, La littérature Syriacque, p. 38.

²⁵ Th. Zahn, Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons, I. Theil: Tatian's Diatessaron, p. 98.

²⁶ G. Phillips, The Doctine of Addai, p. 46.

²⁷ Th. Zahn, Forschungen zur Geschichte, p. 99.

²⁸ J. J. Overbeck, Ephraemi Syri. Opera Selecta, Oxford, 1865, p. 220.

²⁹ A. Ciasca, Tatiani Evangeliorum Harmonicae arabice, Rome, 1888.

³⁰ Th. Zahn, Forschungen Zur Geschichte, p. 99.

³¹ Ասորերեն «Mepharreshē» նշանակում է առանձին

ասորագետ Կյուրերտոնը և հրատարակել³², իսկ մյուսը հայտնաբերել է և հրատարակել Ագնես Լվիդը 1892 թվին³³։ Բուրկիտտը, որը վերջինիս հրատարակչներին էր, երկու այս բնագրերն էլ համեմատել է իրար հետ և նշել, որ երկուսն էլ նույն խմբագրությունից են. նա խոր ուսումնասիրություններից հետո դալիս է այն եզրակացության, որ «Առանձին ավետարանների» ասորերեն տարբերակը հունարենից է թարգմանվել մեր թվականության Բ գարի վերջին, այն էլ Անտիոքում, որովհետև, ինչպես փաստերն են ցույց տալիս, այս «Առանձին ավետարանները» գործածվել են Անտիոքում և նրա շրջակայքում³⁴։ Պատմությունից գիտենք, որ, գրում էլ, անգլիացի մասնագետը, Բ գարի վերջերին Պալուտը, որը Նդեսիա քաղաքի եպիսկոպոսն էր, իր եպիսկոպոսական աստիճանը ստացել էր Անտիոքի Սերարիոն եպիսկոպոսից։ Ըստ երևույթին, շարունակում է ենթադրել Բուրկիտտը, այս ժամանակ էլ այն թարգմանվեց ասորերենի։ Բուրկիտտը համեմատում է «Դիատեսարոնից» հասած վկայականություններն ու «Առանձին ավետարանների» ասորերեն բնագրերը և եզրակացնում, որ վերջինիս թարգմանիչը ծանոթ էր և կամ իր ձեռքի տակ ունեցել էր «Դիատեսարոնի» օրինակը, որովհետև «Առանձին ավետարանների» ասորերեն օրինակում հանդիպում ենք այնպիսի ոճական դարձվածքների ու բառերի, որոնք յուրահատուկ են «Համաբարբառին»³⁵։ Բայց ինչպես կարելի է ենթադրել ասորական աղբյուրների վկայություններից, «Առանձին ավետարանները» ժողովրդականություն չեն ունենում Նդեսիայի ու Մծբինի շրջակայքում, և «Դիատեսարոնը» շարունակում է հիմնականում գործածվել այս քաղաքների եկեղեցիներում ու դպրոցներում, և այդ է պատճառը, որ մինչ և դարի կեսերը ապրող ասորի գործիչների աշխատություններում վկայականները «Դիատեսարոնից» են։ Մինչև որ, ինչպես նշել ենք Նդեսիայի Բաբուլա եպիսկոպոսը 431 թվից հետո արգելում է «Համաբարբառը», և դրա փոխարեն ընդունվում է Բաբուլայի պատ-

րաստած Նոր Կտակարանը, որը գիտնականներին հայտնի է Նոր Կտակարանի «Պեշիտոն» անունով։ Նոր Կտակարանի «Պեշիտոն», ինչպես ուսումնասիրողներից մասն է կարծում են, թարգմանվել է անմիջապես հունարեն «Ծոթանասնիցի» վրայից, ոմանք էլ ենթադրում են, որ այն «Առանձին ավետարանների» (mepharreshe) ասորերեն օրինակի վերանայված տարբերակն է։ Բուրկիտտը վերջին տեսակետին կողմնակից է³⁶, Նոր Կտակարանի «Պեշիտոն» տարբերակում մտել են, այսինքն կանոնական են համարվել «Չորս ավետարանները», «Գործք Առաքելոցը», Պետրոս առաքյալի «Առաջին թուղթը», «Յովհաննու առաջին թուղթը», «Յուդեոս առաջին թուղթը» և վերջում՝ Պողոս առաքյալի բոլոր թղթերը։ Այսպիսով Նոր Կտակարանի «Պեշիտոնում» չեն մտել «Ծոթանասնիցի» կանոնական ճանաչված գրքերից Պետրոս առաքյալի 2-րդ թուղթը կամ «Թուղթ Պետրոսի Բ», և ապա «Թուղթ Յովհաննու Բ, Թուղթ Յովհաննու Գ», «Թուղթ Յուդայի, Յայտնութիւն Յովհաննու»։ Բացի այս բաժիններից Նոր Կտակարանի «Պեշիտոնում» պակասում են նաև Ղուկասի ավետարանի ԺԲ գլխի 17—18 հատվածները՝ Յովհաննու ավետարանի Ը գլխի 1—11 հատվածները և Յովհաննու առաջին թղթի Ե գլխի 7-րդ հատվածը³⁷։

6-րդ դարի ասորական եկեղեցին երկուսի բաժանվելուց հետո, Հսկոբիկյանները, այսինքն միաբնականները, սկսեցին իրենց եկեղեցիներում օգտագործել Աստվածաշնչի «Ծոթանասնից» ասորերեն այն թարգմանությունը, որը կազմել էր Մաբբուկի, այժմյան «Մեմբիչի» եպս. Փիլոքսենոսը մեր թվականության 508 թվին։ Փիլոքսենոսի այս օրինակը սակայն անընդհատ վերանայվել է դարերի ընթացքում, այսպես՝ 616—617 թվերին այն վերստուգվեց Տելլա-դր Մավդեիլա-տի, այժմյան Ալեքսանդրիայի մոտակայքը գտնվող այդ քաղաքի եպիսկոպոս՝ Պողոսի կողմից։ Ը գարի սկզբներին (704—705 թթ.) Նդեսիայի եպիսկոպոս Հակոբը նորից վերանայեց ասորերեն Աստվածաշնչի «Ծոթանասնից» օրինակը։

Հակոբիկյանների հակառակ, նեստորականները շարունակեցին օգտագործել թե՛ Հին Կտակարանի «Պեշիտոն» օրինակը և թե՛ Նոր Կտակարանի «Պեշիտոն», միայն այն տարբերությամբ, որ Նոր Կտակարանի բոլոր

³² W. Cureton, *Remains of a very ancient recension of the four Gospels in Syriac*, Londres, 1858.

³³ The Four Gospels, in Syriac transcribed from the Sinaitic Palimpsest by the late R. Bensly, R. Harris and C. Burkitt, with an introduction by Agnes S. Lewis, Cambridge, 1894.

³⁴ C. Burkitt, *Texts Studies*, VII, № 2, Cambridge, 1901.

³⁵ C. Burkitt, *Evangelion da mepharreshe*, 2 vol, Cambridge, 1904.

³⁶ R. Duval, *La littérature Syriacque*, p. 38.

³⁷ R. Duval, *La littérature Syriacque*, p. 42.

գրքերն էլ տարբեր հերթականությամբ դարձել են կանոնական³⁸։

Այսքանը Աստվածաշնչի ասորերեն թարգմանությունների պատմությունից, Այծմ հարց է ծագում. եթե Աստվածաշնչը առաջին անգամ հայերեն էր թարգմանվել ասորերենից, ապա ո՞ր տարբերակից կարող էր լինել այն։ Ընդհանրապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության հարցին անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտար պատմաբաններ ու բանասերներ։ Ֆրետրիկ Մակկլերը հատուկ ուշադրություն է նվիրել Ավետարանների հայերեն առաջին թարգմանության վրա և ձեռագրական բազմաթյուններով ջանացել է վերականգնել հնագույն օրինակը, և ստացված արդյունքը համեմատել է հունարեն «Ծօթանասնիցի» հետ և եկել այն եզրակացության, որ հայերեն թարգմանությունը ունեցել է հունարեն սկզբնագիր³⁹։ Գերմանացի գիտնական Ավգ. Մերկը սակայն չի համաձայնվել Մակկլերի տեսակետին և իր աշխատության մեջ այդ մասին գրել է.

«Մակկլերի փաստարկումները համոզիչ չեն, որովհետև նույնիսկ մեզ հասած Աստվածաշնչի հայերեն բնագրի մեջ այժմ էլ կան բազմաթիվ տեղեր, որոնք ասորերենից նրա կրած ազդեցության մասին են վկայում։ Այս ասորաբանությունները, — շարունակում է հեղինակը իր գրքում, — կարող էին մուտք գործել մեր այսօրվա հայերեն ավետարանի մեջ ասորերեն սկզբնագրից, նախական թարգմանության ժամանակ և կամ կարող էր հայ թարգմանիչը հունարեն բնագրից թարգմանելիս իր ձեռքի տակ ունեցած լինել ասորերենը»⁴⁰։

Մի քանի գիտնականներ երկարատև ու դժվարին աշխատությամբ, բազմաթիվ աղբյուրների տվյալներից օգտվելով, փորձել են վերականգնել Մարկոսի ավետարանի «Կեսարական» կոչված հնագույն տարբերակին.

³⁸ Այժմյան նեստորականների կանոնական գրքերը հերթականությամբ հետևյալներն են. «Մատթեոսի ավետարան, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննու, Գործք Առաքելոց, Թուղթ առ հոռվմեացիս (Պողոսի), առ կորնթացիս Ա, առ կորնթացիս Բ, առ Եփեսացիս, առ Փիլիպեցիս, առ Կողոսացիս, առ Թեսաղոնիկեցիս Ա, առ Գաղատացիս, առ Թեսաղոնիկեցիս Բ, առ Տիմոթեոս Ա, առ Տիմոթեոս Բ, առ Տիտոս, առ Փիլիմոն, առ եբրայեցիս, Թուղթ Յակոբայ, Թուղթ Պետրոսի Ա, Թուղթ Պետրոսի Բ, Թուղթ Յովհաննու Ա, Բ, Գ, Թուղթ Յուդայի, Յայտնութիւն։

³⁹ Fr. Macler, Le texte arménien de l'Évangile d'après Mathieu et Marc, Paris, 1919.

⁴⁰ A. Merk, Die armenischen Evangelien und ihre Vorlagen, Btblca, 1926, p. 40.

րից մեկը. նրանք այս գործի համար օգտագործել են ինչպես ասորական, այնպես էլ հայկական ու վրացական Նոր Կտակարանի օրինակները և ցույց են տվել, որ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանների վրացերեն թարգմանությունը պատկանում է արևելյան խմբին և այն շատ մոտ է մասնավորապես հայկականին և ապա ասորականին⁴¹։ Այս հարցի շուրջ իրենց հետազոտությունները ավարտելով գալիս են հետևյալ եզրակացության. «Մարկոսի ավետարանի վրացական թարգմանությունը կատարվել է «կեսարական» օրինակից, և քանի որ վրացերենը հայերենից է թարգմանվել, ուստի պետք է ընդունել, որ եղել է հայերեն մի հին թարգմանություն «Կեսարականից», և այն մեզ չի հասել⁴²։ Իրենց եզրակացության մեջ գրում են նաև այն մասին, որ «եթե այժմյան վրացերեն ավետարանը ավելի մոտ է «կեսարական»-ի բնագրին, քան թե հայկականին, պատճառը այն է, որ հայերենը հետագայում սրբագրվել է. համեմատյալ դեպ, շարունակում են նրանք. «Մարկոսի ավետարանի վրացական թարգմանությունը տանում է մեղ դեպի հայկականը, իսկ հայկականն էլ՝ դեպի ասորականը, և որպես այդ տեսակետը հաստատող փաստ վկայակոչում են Մարկոսի ավետարանի Ա և ԺԱ գլուխներում պահպանված բազմաթիվ ասորաբանությունները»⁴³։

Եվրոպացի բանասեր Լիոնեն իր մի աշխատության մեջ և երկու հոդվածներով ջանում է հակառակը ապացուցել. «Թե Մարկոսի ավետարանը հայերեն է թարգմանվել «կեսարականի» ոչ թե ասորերեն, այլ հունարեն օրինակից և նույն Մարկոսի ավետարանի Ա գլխից մատնանշում է հունարեն օրինակին բնորոշ 59 հատկանշական ընթերցվածներ»⁴⁴։

Վիեննայի Մխիթարյան հայրերից բազմավաստակ գիտնական Հ. Ն. Ալիեյանը իր «Սուրբ գրքի հայերեն թարգմանությունը» հոդվածում կանգ է առել այս հարցերի վրա⁴⁵։ Նա գտնում է, որ «Սուրբ գրքի» թարգմանությունը առաջին անգամ ավարտվել է մեր թվականության 408—414 թվերին, և այս ա-

⁴¹ K. Lake, R. P. Blake, S. Now, The Caesarean Text of the Gospel of Mark, „The Harvard Theological Review“, 1928, № 4, p. 286.

⁴² Նույն տեղում, էջ 311.

⁴³ Նույն տեղում.

⁴⁴ St. Lyonnet, La version arménienne des Évangiles et son modèle grec: L'Évangile selon S. Mathieu, „Revue Biblique“, 1934, p. 18. St. Lyonnet Un important témoin du Texte Césaréen de S. Marc: la version arménienne, „Mélanges de l'Université S. Joseph“, t. X/X, 1935, p. 25.

⁴⁵ Ն. Ալիեյան, «Հանգես Ամսորիայ», 1935, էջ 550.



ռաջին թարգմանությունը եղել է «Ղուկիանյան», այսինքն «Անտիոքյան» բնագրից⁴⁶, և իր այս տեսակետը հաստատելու համար բերում է հետևյալ պատճառաբանությունները.

ա. Մաշտոցը Անտիոքի հետ հարաբերություն մեջ էր:

բ. Առակաց դիրքը թարգմանվեցավ ի Սամոսատ, որը Անտիոքյան ազդեցության տակ էր: Կա մի վկայություն ձեռագրերում, որտեղ նշված է, որ հայերեն Աստվածաշունչը «Ուղղեալ է Աղեքսանդրացուց և յԵրուսաղէմացուց օրինակաց. դարձեալ եւ ի Զորեքնոյն Ուրիգենի. (ըստ Ալիսյանի այս օրինակներն էին, որ Սահակի և Մեսրոպի աշակերտները բերեցին Կոստանդնուպոլսից և սրանց հիման վրա էլ վերանայեցին Անտիոքյան օրինակը)»⁴⁷:

Գոկյանը իր «Մակարայեցվոց Բ գրքի հայերեն թարգմանությունը», գրքում եկել է հետևյալ եզրակացության. «Հայը թե «Ալեքսանդրյան», թե «Վեցիլյան» և թե «Ղուկիանյան» ընթերցվածներ կներկայացնեն. ուստի ապարդյուն է պնդել թե արտաքնապես միայն այս կամ մյուսին վրայեն կատարված է: Մակարայեցվոց հայերեն թարգմանության սկզբնագիրը մեղի ծանոթ ոչ մեկի խմբագրության մեջ կգտնենք: Հայն ունեցած է առանձնահատուկ բնագիր խառն նկարագրով»⁴⁸:

Գարագաշյանը իր «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց» գրքի առաջաբանում գրում է, թե ինչպես Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը երրայականի հետ բաղդատելիս, «Զարմանօք դիտեցաք, զի թէպետ եւ թարգմանութիւն մեր զհետ երթայ բազում հաւաստեալ և ճշդիւ զթարգմանութեանն Եօթանասնից, ուրեք խո-

տորեալ ի նմանէ, մերձեայ երրայական բնագրին: Ապաքէն կարևոր խնդիր է. թէ ուստի իցէ խոտորումս այս հայերէնին ի թարգմանութենէ անտի Եօթանասնից»⁴⁹:

Գերմանացի գիտնական Գյոտտսբերգերը կասկածում է Բար-Հերրեոսի այս վկայության վրա, թե Աստվածաշունչի հայ թարգմանությունը աչքի առաջ ունեցել է ասորերեն բնագիր և կարծում, որ այն հաստատելը դժվար է: Ժիշտ է, գրում է նա. «Կան տեղեր, որոնք համաձայն են «Պեղիտոյի» ընթերցվածներին, բայց դրանք ավելի հասարակաց աղբյուր են ենթադրում, քան թե ասորերենից ուղղակի փոխառություն»⁵⁰:

Հայր էսապալյանը իր «Հայերեն Ավետարաններու սկզբնագրի հարցը և Ագաթանգեղոսի ու Ղազար Փարպեցվո կոչումները» շատ արժեքավոր ու շնորհակալ աշխատության մեջ պատասխանում է այն գիտնականներին, որոնք Հայերեն Աստվածաշունչի մեջ հունականի ազդեցությունը նկատի ունենալով միակողմանի եզրակացություններ են կատարում: Ինքն էլ իր հերթին միայն ավետարաններից վկայակոչում է հայերենում եղած ասորական ազդեցության մոտ երկու հարյուր հետք⁵¹:

Էսապալյանը չի բավարարվում իր այս փաստերով և համաձայնվելով անգլիացի հայագետ Կոնիքիթի այն կարծիքին, թե հնագույն հայերեն «Ավետարան» եղած է Տատիանոսի «Համաբարբառը», փաստեր է բերում և մատնաշում, որ Եղնիկը, Ագաթանգեղոսը, Ղազար Փարպեցին իրենց աշխատություններում ավետարանից եղած վկայակոչումները բերել են «Համաբարբառից»⁵²:

⁴⁹ Մ. Գարագաշյան, «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց», Կ. Պոլիս, 1895:

⁵⁰ J. Goettsberger, Die Syro-armenischen und die Syro-Koptischen Bibelzitate aus den Scholien des Barhebraeus, „Zeitschrift für die alttestamentliche Wissenschaft, 1901, № 21, p. 101.

⁵¹ Այստեղ բերում ենք նրա նշած տեղերից մի քանիսը: Մատթեոս՝ Դ-18, Ե-23, Է-4, Ը-17, ԺԲ-44, ԺԴ-6, ԺԷ-17, Ի-14, ԻԸ-10, Մարկոս՝ Ա-44, Բ-21, Է-19, Ժ-13, 16, ԺԴ-41, ԺԵ-19, Ղուկաս՝ Ա-61, Ի-49, Գ-11, Ե-10, Է-37, Ը-14, ԺԶ-21, ԺԸ-41, ԻՍ-21, ԻԲ-64, ԻԳ-15, 41, ԻԴ-1, 32, Յովաննոս՝ Դ-35, Է-36, Ը-20, ԺԱ-36, ԺԲ-22, Ի-12, 25, ԻԱ-8, Եյլ.՝ ՏԵ՛ս Պ. Էսապալյան, «Հայերեն Ավետարաններու սկզբնագրի հարցը», «Հանգէս Ամսօրեայ», 1935, էջ 577:

⁵² Մատթ.՝ Բ-15, Տատիան՝ 31, Մատթ.՝ Գ-8, 9, Տատիան՝ 37, Մատթ.՝ Ե-17, Տատիան՝ 59, Մատթ.՝ Ժ-11-13, Տատիան՝ 84, Մատթ.՝ Ժ-23, Տատիան՝ 88, Մատթ.՝ ԺԶ-13-17, Տատիան՝ 144, Մատթ.՝ ԻԸ-19, 20, Տատիան՝ 207, Յովհ.՝ Ա-11, Տատիան՝ 8, Յովհ.՝

⁴⁶ «Աղեքսանդրացուց» օրինակը, գրում է հայր Ալիսյանը, այն բնագիրն է, որ Հեսթերիոսը կաղմել է Ալեքսանդրիայում և ապա այն տարածվել է ամբողջ Եգիպտոսում: «Երուսաղէմացուցը» կաղմել են Պամփուլիոսը և Եվսեբիոսը՝ Կեսարիայում. սա տարածվեց Պաղեստինում և փոքր Ասիայում: Իսկ «Զորեք-կինն Որոգինեան» սա «Tetrapla» է, որը հանվել էր «Որոգինեայ Վեցիլեանից», հավանաբար նախագաղափար օրինակը, որմե թարգմանվել է և տարածվել Անտիոք-Կ. Պոլիս գծի վրա: Այս խմբերի մասին տեղեկությունները, — Հայր Ալիսյանը հայտնում է, — որ պարտական ենք Հերոնիմոսին Praef in Apol. adv. Ruf. 2. 27, տե՛ս էջ 556):

⁴⁷ Նույն տեղում: Հավատացած ենք, որ Սահակն ու Մեսրոպը Եփեսոսի ժողովից հետո Նոր Կտակարանի օրինակը վերանայելիս իրենց ձեռքի տակ ունեցած կլինեին «Առանձին ավետարանների» մի օրինակը:

⁴⁸ Ս. Գոկյան, Մակարայեցվոց Բ. գրքին հայերեն թարգմանությունը, Վիեննա, 1923, էջ 60-61:



և դրանից էլ բնականաբար եզրակացնում է, որ գրքերի գլուխից հետո հայերը առաջին անգամ թարգմանել են «Համաբարբառը», և այդ «Ավետարանն էլ օգտագործվել է հայկական եկեղեցիներում»:

Մենք ևս համոզված ենք էսապալյանի ենթադրության հավանական լինելուն, որովհետև կարծում ենք, որ առնվազն Եփրեմ Ասորու «Համաբարբառի մեկնության» թարգմանությունը այդ ժամանակ՝ լավագույն ապացույցներից մեկը պետք է համարել: Հայերը, ասորիների նման, մինչև Եփեսոսի ժողովը, գործածել են «Տատիանոսի Համաբարբառը» կամ «Իրատեսարոնը» և դրանից հետո ինչպես ասորիները, այնպես էլ հայերը հետզհետե ոչնչացրել են այդ օրինակը՝ գործածության մեջ դնելով արդեն «Եօթանասնիցի» հետևողությամբ պատրաստված թարգմանությունը: Համենայն դեպս վերջին թարգմանիչները իրենց ձեռքի տակ ունեցած կլինեն նաև «Համաբարբառը» և այդ պատճառով էլ, որոշ ասորաբանություններ մնացել են Աստվածաշնչի այժմյան հայերեն թարգմանության մեջ:

Այսպես, եթե ընդունելու լինենք, որ նոր Կտակարանի հայերեն առաջին թարգմանության նախատիպար օրինակ է հանդիսացել Տատիանոսի «Համաբարբառը», ապա Հին Կտակարանի առաջին հայերեն թարգմանությունը եղել է ասորերենի «Պեշիտոտ» կոչված տարբերակից:

Ուսումնասիրության սկզբում մատնաչել ենք, որ Գր. Խալաթյանը հրատարակել է Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունից մեր ձեռագրերում պահպանված Մնացորդաց Ա և Բ գրքերը: Աստվածաշնչի հայերեն այս նորագլուխ հատվածները հրատարակիչը բաղդատել է նախ երրայականի

հետ և գտել, որ այն ընդհանուր նմանություն ունի և մոտ է երրայականին: սակայն ինչպես երևում է Խալաթյանը այն ասորերեն բնագրի հետ համեմատելիս ղեկավարության առաջ է կանգնել: ասորագետ շլինելով նա, ինչպես կարելի է հետևեցնել իր առաջարանից, ձեռքի տակ ունեցել է ոչ թե Աստվածաշնչի ասորերեն «Պեշիտոտ», այլ «Եօթանասնից» օրինակը⁵³ և այդ պատճառով էլ անորոշության մեջ ընկնելով «Խնդրի մանրակրկիտ հետազոտությունը և վերջնական եզրակացությունը թողել է ասորագետներին»⁵⁴: այժմ Մնացորդաց Ա և Բ գրքերից մեկական փոքր հատված կհամեմատենք ասորերեն «Պեշիտոտի» համապատասխան մասի մեր կատարած հայերեն թարգմանության հետ և միևնույն ժամանակ կողքին կդնենք այժմյան օրինակից նույն հատվածը, տարբերություններն ու նմանությունները ակնհայտ դարձնելու նպատակով: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ իսկապես մեղ հասած Մնացորդաց Ա և Բ գրքերը թարգմանվել են ասորերենի «Պեշիտոտ» օրինակից, և եթե կան փոքր տարբերություններ, ապա դրանք, այսինքն, ինչպես ասորերեն, այնպես էլ հայերեն բնագրերը դարերի ընթացքում ոչ միայն փոփոխվել, այլև իրար վրա ազդել են: Համենայն դեպս այս համեմատությունը հաստատում է «Պեշիտոտի» և Խալաթյանի հրատարակած «Մնացորդաց» գրքերի անժխտելի նմանությունը:

Ա—18, Տատիան՝ 7, Յովհ.՝ Ա—29, 30, Տատիան՝ 28, Տե՛ս. Պ. էսապալյան, «Հայերեն ավետարաններու սկզբնագրի հարցը», էջ 595:

⁵³ Գր. Խալաթյանց, Գիրք Մնացորդաց ըստ հնագույն հայ թարգմանության, էջ 21:

⁵⁴ Նույն տեղում:

Մեզ հասած Աստվածաշնչի օրինակը

«Մնացորդաց Առաջին գլուխ Ա⁵⁵
Աղամ, Սէթ, Ենովս, Կայնան,
Մադադալէլ, Յարեդ, Ենովք, Մաթուադայ, Ղամէք, Նոյ:
Որդիք Նոյի՝ Սէմ, Քամ, Յաբէթ:
Յաբէթ Որդիք Յաբէթի՝ Գամեր, Մազովզ, Մադայի, Յովիդան, Եղիսան, Թոբէլ, Մոսոք և Թիրաս:
Եւ որդիք Գամերայ՝ Աքանազ և Հոփաթ և Թորգոմա: Եւ որդիք Յովիդանայ՝ Եղիսա և Թարսիս, Կիտացիք և Հոռոգացիք: Եւ որդիք Քամայ՝ Քուս և Մեստրեմ, փուղի և Քանան, և որդիք Քուսայ՝ Սա-

Խալաթյանցի հրատարակած օրինակը

«Գլուխ առաջին Մնացորդաց (Ա)⁵⁶
Աղամ, Սէթ, Ենովս, Կայնան,
Մադադալէլ, Յարեդ, Ենովք, Մաթուադայ, Ղամէք, Նոյ, Ենմ, Քամ:
Որդիք Յափեթայ Գոմէր, Մազովզ, և Մադայ, և Յաւան և Թովբէլ (Մոսոք) և Թիրայ:
Եւ որդիք Գոմերայ իշխանազ և Հոփաթ և Թորգոմ: Որդիք Յաւանու: Եզիշան, Թարշիշ և Քեթիին և Գոգանայիմ: Որդիք Քամա. Քուս և Մէզրէմ, փուփ և Քանայան: Եւ որդիք Քուսայ. Սարայ և Եղիզաթ

Ասորերեն բնագրի մեր թարգմանությունը

«Ա. Մնացորդաց»

Աղամ, Եփթ, Ենովշ, Կայինան,
Մահալայէլ, Յարեդ, Ենովք, Մաթուալեղ, Ղամեք, Նոյ, Ենմ, Քամ, Յափեթ:

Որդիք Յափեթայ Գոմէր, Մազովզ, Մադի, և Յաւան և Թովբէլ, Մոլք, և Թիրաս:

Եւ որդիք Գոմերայ, իշխանազ և Դիփաթ և Թորգոմա: Որդիք Յաւանու Եղիշայ, Թարշիշ, Քեթիմ և Դոդնիմ: Որդիք Քամա, Քուշ և Մեզրիմ, Փութ, և Քանդան:

րա, Եփրայ և Սաբաթա և Հոնգ-մա և Սաբակաթա: Եւ որդիք Հոնգմա՝ Սաբա և Դեղան: Եւ Քուս զնեմրովթ: սա սկսաւ լինել Հսկայ որսորդ ի վերայ երկրի: Եւ Մեստ-րեմ ծնաւ զլուծիմացիս և զյա-բիինացիս և զանաիմացիս և զան-դեհիթիմացիս և զպատրոսի-մացիս և զանաիմացիս և զբաղ-սոնիիմացիս: ուստի ելին անտի-փղշտացիք, և զբափտորիմա-ցիսս:

Եւ, ⁵⁸ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր և զբաննանացին և զյեբրուսացին և զամուրացիս և զԳերզեհացիս և զխեւացիս և զարուկեցիս և զարսենացիս և զարազացիս և զՍամարացիս և զամաթացիս: Որդիք Սեմայ ելամ և Ասսուր և Արփաքսազ և լուդ և Արամ և որդիք Արամայ՝ Հուս և Եմովլ և Գաթի և Մոսոթ: Եւ Արփաքսազ ծնաւ զԿայինան, և Կայինան ծնաւ զՍաղա, և Սա-ղա ծնաւ զԵբեր և Եբերայ ծնան երկու որդիք, անուն միումն փա-ղէք, զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր և անուն եզբոր նորա Յեկ-տան: Յեկտան ծնաւ զելմովղազ և զՍալափ և զԱրամովթ և զԿեղ-րուան և զԵնդլ և զԴեկլան և զԿամաան և զԱրեմէլ և զՍաբա և զՍուփիր և զԵնդլրամ: ամենեքեան սոքա որդիք Յեկտա-նայ:

Որդիք Ումայ՝ Ելամ և Ասսուր և Արփաքսազ, Կայինան, Սաղա, Եբեր, Փաղէկ, Ռադա, Սեբուր, Նաբովր, Թասայ, Արամ, և ինքն է Արրամ:

Եւ որդիք Արրամու՝ Իսաակ և Իոմայլ: Սոքա են ծնունդք Իո-մայիլի՝ Նաբէովթ և Կեղար և Նաբգեղ, Մաբսան, Մասմա և Ի-լուամ՝ Մասոթ, Քոդազ, Թաման, Իտուր Նափէս և Կեղմա: սոքա են որդիք Իոմայիլի:

Մնացորդաց երկրորդ զլուի ԱՅՅՅ
Եւ զօրացաւ Սոդոմոն որդի Դաթի ի Թաղաւորութեան իւրում: և տէր Աստուած իւր ընդ նմա էր, և մեծացոյց զնա ի բարձրութիւն: Եւ ասաց Սոդոմոն ցամենայն Իս-րայէլ, ցհազարապետս և ցհարի-րապետս և ցհատաւորս և ցամե-նայն իշխանս տոհմիցն, և զնաց Սոդոմոն և ամենայն եկեղեցիս

և Շէրաթայ և Հոնկմայ և Սեռե-կաթայ: Եւ որդիք Հոնկմա, Սաբա և Դաղան, Եւ Քուս ծնաւ զնեմրովթ: Սա էր որ ասացին սկայ էր ի վե-րայ երեսաց երկրի: Եւ մետրեմ ծնաւ զլուիլա, ցիսն և էնմայացիսն և զնեփթովմիացիսն և զիաթեթով միացիսն և (զ) զՔերովմիացի-ցիսն: ուստի ելին անտի փոնետա-ցիքն զԿաթիթովմիացիսս:

Եւ Քանան ծնաւ զՍուր. զանդ-րանիկ իւր և զԵն և զԵբուսացիս և զԳերզեհացիս և զխեւացիս և զԱրուա-ղայն և Շամարայն և զԱմաթիս: Եւ որդիք Շեմայ. Եմա և Ասսուր և Արփաքսազ և լուդ և Արամ և Ուդ և Գէթէր և Մոսոթ:

Եւ Արփաքսազ ծնաւ զԿայինան և Կայինան ծնաւ զՇալալայ, և Շա-ղայ ծնաւ զԵբեր: Եւ Եբերայ եղև որդիք երկու անուն միումն փա-ղէկ, զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր, և անուն (եզբոր նորա) Յեքտան: Եւ Յեքտան ծնաւ զԵղ-մովղազ և զՇաղէփ և զԱսերմովղ և զՅարեթ և զԱղովրամ և զՈւ-ղազ և զԵղան և զԵբրան և զԱ-րիմէլ և զՍաբա և զՍուփիր և զԵ-փղաթ և զՅոթբաթ:

Ամենեքին սոքա որդիք էին Յեկ-տանայ: Որդիք Շեմա Որփաքսան, Կայինան, Շաղա, Եբեր, Փաղէկ, Հոնգա, Սեբովր, Նաբովր, Թասա, Արրամ, այսինքն է Աբրահամ: Որդիք Աբրահամու, Իսաք և Իսմ-մայլ: Այս ծնունդք նոցա. անդ-րանիկ Իսմայիլ Նաբովր և Կեղա և Արիլ և Սաբսան և Մաշեմայ և Յուդմայ և Մասա և Աղազ և Թեման և Յեկովր և Նափիս և Կեղմա այս են որդիք Իսմայիլի:

Գլուխք երկրորդ Մնացորդաց
Թաղաւորութեանց⁶⁰ (Ա)

Եւ զարացաւ Սոդոմովն որդի Դաթի ի Թաղաւորութեան իւ-րում, և Տէր Աստուած իւր ընդ նմա էր, և մեծացուցանէր զնա յոյժ: Ապա խաւել սկսաւ Սաղոմովն ընդ ամենայն Իսրայէլ, ընդ իշխանս հաղարար զնոցա և ընդ զարա-զուխս հարիւրապետսն և ընդ զատաւորսն և ընդ ամենայն իշ-խանս նաճապետաց ազգատոհմիցն առաջի ամենայն Իսրայէլացոց: Եւ զնաց Սոդոմովն և ամենայն զաւ-րքն ի բարձունս, զի անդ էր

Եւ որդիք Քուշայ, Սաբայ, Ես-դիայ և Սաբաթայ և Ռադամայ և Սեբերկայ: Եւ որդիք Ռադամայի, Շարայ և Դաղան: Եւ Քուշ ծնաւ զնեմրովթ: Սա էր որ առաջին սկայ էր ի վերայ երեսաց երկրի: Եւ Մեսրիմ ծնաւ զլուիլմացիսն և զնեփթովմացիսն և զիաթեթովմացիսն և զՔեւլովմացի-ցիսն, ուստի ելին անտի փլշտա-ցիքն զԿաթիթովմացիսս:

Եւ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր և զխեւացիս, և զԵ-րուսացիս և զԱմուրացիս և զԳեր-զուսացիս և զխեւացիս, զԱրուկե-ցիս և զԱսանիս զԱրզուդայն և Սամարայն և զխամաթիս: Եւ որ-դիք Շեմայ Ելամ և Աշուր և Ար-փաքսազ և լուդ և Արամ և Ղուս և Ղուլ և Գէթէր և Մոշոթ:

Եւ Արփաքսազ ծնաւ զՇալալայ և Շալալայ ծնաւ զԵբեր, և Եբերայ եղև որդիք երկու անուն միումն փաղէկ, զի յաւուրս նորա բաժա-նեցաւ երկիր, և անուն եզբոր նո-րա Յեքտան: Եւ Յեքտան ծնաւ զԵղմովղազ և զՇաղէփ և զԱսեր-մովղ և Յարեթ և զՀաղովրամ և զՈւլալ զԴեղան զԵբրեյ և զԱ-րիմէլ և զՇաբայ և զՍուփիր և զԵ-փղաթ և զՅոթբաթ:

Ամենեքին սոքա որդիք էին Յեկ-տանայ: Արփաքսազ և Շեմ, Շա-լա, երկր փալեղ, Ռադով, Սեբովր, Նաբովր, Թասայ, Արրամ, այսինքն է Աբրահամ:

Որդիք Աբրահամու, Իսաք և Իշմայիլ: Այս ծնունդք նոցա. անդ-րանիկ Իշմայիլ Նաբովր և Կե-ղար և Արիլ Սաբսամ և Սաշե-մազ և Դոմա և Մասա, Խաղար, և Թեման, Յեթոր և Նափիշ և Կեղ-մա. այս են որդիք Իշմայիլի:

Բ. Մնացորդաց ⁶¹

զլուի Ա

Եւ զարացաւ Շալիմովն որդի Դաթի ի Թաղաւորութեան իւրում և Տէր Աստուած իւր ընդ նմա էր և մեծացուցանէր զնա յոյժ: և ա-սաց Շալիմովն ցամենայն Իսրայէլ, ցիշխանս հաղարար զնոցա և զհարիւրապետս և ցհատաւորս և ամենայն իշխանս նաճապետաց և ազգատոհմաց Իսրայէլացոց: Եւ զնաց Շալիմովն և ամենայն զաւրքն ի բարձունս, Գաբաղոնի, զի անդ էր վրան ժամուն Աստու-



ընդ նմա ի բարձրաւանդակն Կաթողիկոսի, ուր էր անդ խորանն վկայութեան Աստուծոյ՝ զոր արար Մովսէս ծառայ Տեառն յանապատին, բայց զտապանակն Աստուծոյ եհան Դաւիթ յԵրուսաղէմ. եւ սեղանն պղնձի՝ զոր արար Բեսէլիէլ որդի Ուրիայ որդւոյ Յովրայ՝ անդ էր առաջի խորանին Տեառն. եւ խնդրեաց ինքն Սողոմոն եւ եկեղեցին, եւ եհան անդ Սողոմոն ի վերայ պղնձի սեղանոյն առաջի Տեառն ի խորանին, եւ մատոյց ի վերայ նորա ողջակէզս հազարս ի գիշերին յայնմիկ երեւեցաւ Աստուած Սողոմոնի, եւ ասէ ցնա. խնդրեա զինչ տաց քեզ:

«Եւ ասէ Սողոմոն ցԱստուած. Դու արարեր ընդ Դաւթի հօր իմում ողորմութիւն մեծ, եւ թագաւորեցուցեր զիս փոխանակ նորա. եւ արդ, տե՛ր Աստուած, հաւատարիմ լիցի անուն քո ի վերայ Դաւթի հօր իմոյ, վասն զի դու թագաւորեցուցեր զիս ի վերայ բազում ժողովրդեանս որ է իբրեւ զհոգ երկրի»:

վրան ժամուն վկայութեանց Տեառն Աստուծոյ, զոր արար Մովսէս ծառայ Տեառն յանապատի անգ. քանզի զտապանակն կտակարանաց Տեառն եկն երեւ Դաւիթ ի Կարիաթարիմ քաղաքէ, և կանգնեաց նմա խորան Դաւիթ յԵրուսաղէմ, և սեղան արուրի, զոր արար Բեսէլիէլ որդի Շարուհեայ, անդ էր վրան ժամուն վկայութեանց Տեառն, և խնդրի արար Սողոմոն ի վերայ սեղանոյն, որ կայր առաջի Տեառն ի խորան ժամուն, և անգ մատուցանէր ողջակէզս հազարաւորաց: Եւ ի գիշերին յայնմիկ երեւեցաւ Տէր Սողոմոնի և ասէ, խնդրեա դու քեզ, զինչ խնդրես և տաց քեզ»:

«Եւ ասէ Սողոմոն ցԱստուած. դու արարեր ընդ Դաւթի հօր իմոյ ողորմութիւն մեծ և թագաւորեցուցեր զիս փոխանակ նորա. եւ արդ, Տէր Աստուած, հաստատեցի բանն քո, որ ընդ Դաւթի հօր իմում էր, զի թագաւորեցուցեր զիս ի վերայ ժողովրդեանս իդի մեծի այսորիկ, որ բազմացեալ են իբրեւ զհոգ երկրի»:

ձոյ, զոր արար Մուշա ծառայ տեառն յանապատին. քանզի զտապանակն Աստուծոյ երեւ Դաւիթ ի քաղաքէ Յազրիմ և կանգնեաց նման խորան Դաւիթ յԵրուսաղէմ և սեղան արուրի՝ զոր արար Բեսէլիէլ որդի Ուրիայ որդւոյ Յովրայ. անդ էր առաջի խորանին Տեառն. եւ խնդրի արար Շալիմոն ի վերայ սեղանոյն, որ կայր առաջի Տեառն ի խորանին և անգ մատուցանէր ողջակէզս հազարս ի գիշերին յայնմիկ երեւեցաւ Աստուած Շալիմոնի և ասէ. խնդրեա դու քեզ. զինչ խնդրես և տաց քեզ»:

«Եւ ասէ Շալիմոն ցԱստուած. Դու արարեր ընդ Դաւթի հօր իմոյ ողորմութիւն մեծ և թագաւորեցուցեր զիս փոխանակ նորա. եւ արդ Տէր Աստուած, եւ հաստատեցի բանն քո, որ ընդ Դաւթի հօր իմում զիս թագաւորեցուցեր զիս ի ժողովրդեանս մեծի այսորիկ, որ է իբրեւ զհոգ երկրի»:

Այս հատվածների բաղադրությունը հաստատում է այն ենթադրության ճշմարտությունը, որ Գր. խալաթյանցի հրատարակած «Մնացորդաց Ա և Բ գրքերի» թարգմանությունը կատարված է ասորերեն «Պեշիտտո» օրինակից, և խալաթյանցը թյուրիմացություն մեջ էր ընկել այն պատճառով, որ

⁵⁵ «Գիրք Աստուածաշունչ», Վենետիկ, 1860, էջ 357 հատված, գլխ. Ա, 1—13:

⁵⁶ Գր. խալաթյանց, Գիրք մնացորդաց, էջ 1, գլուխ Ա, հատված 1—13:

⁵⁷ Ասորերեն Աստվածաշունչ. Ուրմիա, 1852 («Պեշիտտո»), էջ 480, գլ. Ա, հատված 1—13:

Ասորերենից թարգմանելիս աշխատել ենք ասորերեն անվանաձևերը նույնությամբ պահպանել:

⁵⁸ Հատված 13—31 (շար. Ա գլխից):

⁵⁹ էջ 383, հատված 1—7:

⁶⁰ էջ 55, հատված 1—7:

⁶¹ էջ 528, հատված 1—7:

⁶² Հատված 7—10:

իր ձեռքի տակ ունեցել էր, ինչպես կարծում ենք, ասորերեն «Եօթանասնիցի» և ոչ թե «Պեշիտտոյի» օրինակը: Եթե կան փոքր, կարելի է ասել, աննշան տարբերություններ, ապա այն պետք է վերագրել ոչ միայն փոխադարձ ազդեցությունների, այլև ինչպես դժվար չէ կռահել, նաև դրչական սխալներին: Այսպիսով, «Մնացորդաց» գրքերի այս թարգմանությունը հանդիսանում է առաջին թարգմանիչներից մեզ հասած մի անգին գանձ, նշխար, որը վկայում է ոչ միայն նրանց ունեցած բազմակողմանի գիտելիքների հարստության մասին, այլև ցույց տալիս թարգմանչական արվեստի մեջ ունեցած նրանց հմտությունը:

5-րդ դարի սկզբներին, հայերեն գրերի գյուտից անմիջապես հետո կատարված այս թարգմանությունը իր կատարելությամբ այսօր էլ կարող է հիացնել ամեն մի մասնագետի, գիտնականի:

